ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՆՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ *

ՀՏԴ 331. 5 *DOI: 10.52063/25792652-2025.1.24-242*

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
lusine.zenit@gmail.com
ORCID: 0009-0007-8886-9227

Մարզային անհամաչափ զարգացվածությունը ՀՀ-ում խնդիրներից մեկն է, որը ավելի է ընդգծվել անկախացումից հետո՝ վերջին երեսուն տարիների ընթացքում, երբ բազմաթիվ մարզային գործարաններ դադարեցրին իրենց կարևորագույն գործունեությունը, աղքատության պատճառով մեծ թափ առավ աշխատանքային միգրացիան, իսկ մարզային բնակչության այն հատվածը, որը չբռնեց արտագաղթի ճանապարհը, տեղափոխվեց Երևան:

Հետազոտության նպատակն է բացահայտել մարզային անհամաչափ զարգացվածության կառուցվածքային պատճառները և ներկայացնել հնարավոր լուծումներ՝ ուղղված մարզերի տնտեսական ակտիվացմանը:

Հետազոտության հիմնական խնդիրներն են՝

1. ***գնահատել աշխատաշուկայի կառուցվածքը ՀՀ մարզերում,***
2. ***վերլուծել տնտեսական ռեսուրսների, տնտեսվարող սուբյեկտների և կրթական հաստատությունների տարածքային բաշխվածությունը,***
3. ***ուսումնասիրել այլ երկրների՝ մասնավորապես Չինաստանի, Սինգապուրի և Թաիլանդի փորձը համաչափ զարգացման ապահովման ուղղությամբ:***

Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատական վերլուծության և դեպքի ուսումնասիրության մեթոդները՝ վերոնշյալ երկրների փորձի համադրման նպատակով:

Հիմնական եզրահանգումներն ընդգծում են, որ մարզային անհամաչափ զարգացման հիմնական պատճառներն են՝ աշխատուժի և կրթական հնարավորությունների կենտրոնացումը մայրաքաղաքում, ենթակառուցվածքների անբավարար զարգացումը և տեղային տնտեսական քաղաքականության բացակայությունը: Այս խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է կիրառել համալիր մոտեցում, որը ներառում է հարկային արտոնությունների սահմանում մարզերում, բարձրագույն կրթության հասանելիության բարձրացում՝ բակալավրիատի և մագիստրատուրայի օնլայն ծրագրերի ներդրման միջոցով, ինչպես նաև մարզային ենթակառուցվածքների զարգացում: Նման փոփոխությունները կնպաստեն մայրաքաղաքում կենտրոնացվածության մակարդակի նվազեցմանը և կխթանեն մարզերի համաչափ զարգացումը՝ ապահովելով երկարաժամկետ տնտեսական աճ:

* Հոդվածը ներկայացվել է 17.02.2025թ., գրախոսվել՝ 16.03.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

Հիմնաբառեր՝ *աշխատաշուկայի կառուցվածք, գործազրկություն, մարզային անհամաչափ զարգացվածություն, զբաղվածություն, միջին ամսական անվանական աշխատավարձ, աշխատանքային ռեսուրսներ, աշխատանքային ռեսուրսներն ըստ կրթական մակարդակի:*

Ներածություն

Տարածքային անհավասար զարգացումը Հայաստանի Հանրապետությունում շարունակում է մնալ համազգային սոցիալ-տնտեսական մարտահրավերներից մեկը: Հատկապես վերջին երեք տասնամյակների ընթացքում՝ անկախության վերականգնումից հետո, երբ մի շարք մարզային արդյունաբերական կառույցներ դադարեցրին իրենց գործունեությունը, աղքատության խորացումը հանգեցրեց աշխատուժի արտահոսքի, ներքին միգրացիայի և մարզերի տնտեսական թուլացման: Արդյունքում մայրաքաղաքը դարձավ կրթական, տնտեսական և վարչական կենտրոն՝ կլանելով մարդկային և ֆինանսական ռեսուրսների մեծ մասը:

Այս համատեքստում առաջնահերթ է դառնում հասկանալ, թե ինչպես են տարածքային անհավասարությունները արտահայտվում աշխատաշուկայի կառուցվածքում՝ մարզերի տնտեսական ակտիվության մակարդակի, զբաղվածության, գործազրկության, աշխատավարձերի տարբերության և կրթական հնարավորությունների կտրվածքով:

Վերլուծություն

ՀՀ-ում աշխատանքային ռեսուրսները կազմում են 2 372,5 հազար մարդ, որից աշխատուժից դուրս գտնվող բնակչությունը կազմում է ՝ 44% (1 050,2 հազար մարդ), իսկ աշխատուժը ՝ 56% (1 322,3 հազար մարդ) (ՀՀ վիճակագրական կոմիտե, Աշխատանքային ռեսուրսներ 2022):



Գծապատկեր 1. Աշխատուժից դուրս բնակչություն ըստ կազմի

Աշխատանքային ռեսուրսների գերակշիռ մասը՝ 865,4 հազարը, կենտրոնացած է ք. Երևանում, իսկ ամենաքիչ մասը ՝ Վայոց ձորում (ՀՀ վիճակագրական կոմիտե,Աշխատանքային ռեսուրսներ 2022):



Գծապատկեր 2. Աշխատանքային ռեսուրսներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի

Մայրաքաղաքի կենտրոնացվածությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծ մասը գտնվում է Երևանում, և բուհն ավարտելով՝ մեծամասնությունը նախընտրում է մնալ և իր կարիերան կառուցել մայրաքաղաքում:

Տնտեսական կարևորագույն ցուցանիշը, որը բնորոշում է աշխատաշուկան որպես համակարգ, գործազրկության մակարդակն է: Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների՝ ՀՀ-ում գործազուրկ է 177 հազար մարդ, որը կազմում է աշխատուժի 12,6%-ը (ՀՀ Վիճակագրական կոմիտե, Ժամանակագրական շարքեր, 2008-2023):



Գծապատկեր 3. Գործազրկության մակարդակը ,%

Համաձայն վիճակագրական կոմիտեի տվյալների՝ գործազրկության մակարդակը նվազել է մոտ 4 տոկոսային կետով (ՀՀ ՎԿ, ժամանակագրական շարքեր 2008-2023), չնայած, ըստ փորձագիտական հանրության, այն 12,6-ի փոխարեն կազմում է 20%: ԵԱՏՄ երկրների մեջ գործազրկության մակարդակով ՀՀ-ն առաջինն է, հաջորդը Ղազախստանն է (4,7%), ապա՝ Ղրղզստանը (4,1%), Բելառուսը (2,9%), և

գործազրկության ամենացածր մակարդակը ԵԱՏՄ պետությունների մեջ Ռուսաստանի Դաշնությունում է (2,6%):

Տարածաշրջանի պետություններից ՀՀ- ն գործազրկության մակարդակով զիջում է միայն Վրաստանին, որտեղ գործազրկության մակարդակը 15,6% է (Statistical Committee of Georgia, 2023), Թուրքիայում այն կազմում է 9,7% (ԹՀ Վիճակագրական կոմիտե,Աշխատանք և սոցիալական հարցեր, 2023թ.) իսկ տարածաշրջանում գործազրկության ամեացածր մակարդակը Ադրբեջանում է՝ 6% (Statistical Committee of Azerbaijan, 2023):

Գործազրկության նվազեցումը, հանդիսանալով տնտեսական աճի ամեակարևոր գործոններից մեկը, համարվել է շա՛տ երկրների պետական քաղաքականության առանցքային հարց: Օրինակ՝ Սինգապուրը անկախություն ձեռք բերելուց հետո բախվեց գործազրկության բարձր մակարդակի և տնտեսական դժվարությունների: Որդեգրելով տնտեսական աճը՝ որպես միակ հնարավոր զարգացման ճանապարհ՝ պետական քաղաքականության մեջ ներառվեցին մի շարք կարևոր թիրախներ.

1. Կառավարությունը խթանեց արդյունաբերականացման գործընթացը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր՝ նվազեցնելով գործազրկությունը:
2. Ստեղծվեցին բարենպաստ պայմաններ օտարերկրյա ներդրողների համար, ինչը նպաստեց նոր աշխատատեղերի ստեղծմանը և տնտեսական աճին:
3. Մեծ ուշադրություն դարձվեց կրթության համակարգի բարելավմանը և աշխատուժի հմտությունների զարգացմանը՝ ապահովելով որակյալ և մրցունակ աշխատուժ:
4. Հաստատվեց խիստ հակակոռուպցիոն քաղաքականություն, ինչը բարձրացրեց վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ և նպաստեց բիզնես միջավայրի բարելավմանը (Իսրաելյան 2022):

Համաձայն Համաշխարհային բանկի տվյալների՝ Սինգապուրում գործազրկության մակարդակը կազմում է 3. 5% (2023), իսկ վերջին 30 տարվա ընթացքում գործազրկության ամենաբարձր մակարդակը եղել է 2009թ. -ին՝ 5,9%, որը կապված էր համաշխարհային ճգնաժամի հետևանքների հետ (WBG 1990-2023):

Համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի հրապարակած տվյալների՝ 2024թ. -ի հոկտեմբերի դրությամբ գործազրկության ամենացածր մակարդակը գրանցվել է Թաիլանդում՝ կազմելով 1,1% (IMF, 2024): Այս պետությունը հարավարևելյան Ասիայի երկրորդ խոշորագույն տնտեսությունն է՝ Ինդոնեզիայից հետո, որտեղ բնակչության զբաղվածության(Statista Thailand, 2013-2023) հիմնական ոլորտներն են `

- Ծառայությունները-47,34%
- Գյուղատնտեսությունը-30,42%
- Արդյունաբերությունը-22,24%;

Ճապոնիայում, որտեղ գործազրկության մակարդակը նույնպես ցածր է `2,5%, բնակչության զբաղվածության մեծ մասը ` 73. 35%-ը, կրկին ընդգրկված է ծառայության ոլորտում, դրան հաջորդում է արդյունաբերության ոլորտը ` 23,55%, ապա գյուղատնտեսության ոլորտը՝ 3,1% (Statista, Japan 2012-2022):

ՀՀ-ում զբաղվածների հիմնական մասը ` 57,4%-ը, նույնպես աշխատում է ծառայության ոլորտում, մասնավորապես՝ պետական կառավարման, կրթության, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման հատվածում (22,8% զբաղվածների ընդհանուր համաթվից), գյուղատնտեսության ոլորտում՝ 19,2%, արդյունաբերության ոլորտում `13. 3% և շինարարության ոլորտում՝10,1% (ՀՀ ՎԿ, Աշխատանքային ռեսուրսներ 2024): Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության գրեթե 20%-ը վկայում է տնտեսության արդիականացման խնդրի և աշխատաշուկայի սխալ բաշխման մասին: Վերոհիշյալ տվյալները փաստում են, որ Հայաստանի

տնտեսությունը դժվարանում է անցնել այն փուլը, որտեղ ծանր գյուղական արտադրությունը փոխարինվում է ավելի արդյունավետ, տեխնոլոգիապես զարգացած ծառայության և արտադրության ոլորտներով:



Գծապատկեր 4. Զբաղվածությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների

Գործազրկության և աշխատաշուկայի կառուցվածքի կարևորագույն գործոններից մեկը հասարակության՝ մասնավորապես՝ աշխատանքային ռեսուրսների կրթական մակարդակն է: Այս համատեքստում հատկանշական է ընդգծել կրթության մեջ կատարվող ներդրումների կարևորությունը և՛ պետության կողմից, և՛ ընտանիքի կողմից: Երկիրը պետք է որդեգրի կրթության ֆինանսավորման ճկուն քաղաքականություն, որը թույլ կտա բուհերին և ՄՄՈՒՀ-ին (միջին մասնագիտական ուսումնական հաստատություն) պատրաստել աշխատաշուկային համապատասխան կադրեր: ՀՀ-ում աշխատանքային ռեսուրսների մեծ մասը ՝ 43%-ը, ունի ընդհանուր միջնակարգ կրթություն, իսկ բարձրագույն կրթություն ունեն աշխատաքային ռեսուրսների միայն 25%-ը (ՀՀ ՎԿ,Աշխատանքային ռեսուրսներ 2023):



Գծապատկեր 5. Աշխատանքային ռեսուրսներն ըստ կրթական մակարդակի

Ըստ բնակավայրի տեսակի՝ գյուղական բնակավայրերում աշխատանքային ռեսուրսների միայն 14%-ն ունի բարձրագույն կրթություն, իսկ 11%-ն ունի հիմնական ընդհանուր կամ ցածր կրթական մակարդակ (ՀՀ ՎԿ, Աշխատանքային ռեսուրսներ 2022): Այս փաստը ընդգծում է մարզերի անհահամաչափ զարգացվածության մակարդակի խնդիրը, որը ՀՀ-ում բավականին սուր է: Կրթության անհասանելիության պատճառով երիտասարդը լքում է մարզային քաղաքը կամ գյուղը, ստանում կրթություն մայրաքաղաքում և շարունակում իր հետագա կյանքը Երևանում՝ աշխատելով և զարգացնելով մայրաքաղաքը, կամ որակյալ աշխատուժը, չգտնելով լավ վարձատրվող աշխատանք հայրենիքում, լքում է այն: Այս միտման պատճառով մարզերում նվազում է միջին աշխատավարձը, աճում՝ սոցիալ-տնտեսական անհավասարությունը և գործազրկության մակարդակը:



Գծապատկեր 6. Գործազրկության մակարդակը ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի

Ըստ տվյալների՝ գործազրկության մակարդակի տարբերությունը բավականին ընդգծված է Տավուշի մարզում. այն ամենաբարձրն է՝ 23.3%, մինչդեռ Արագածոտնում՝ ամենացածրը՝ 4% (ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկայի ցուցանիշներ 2024):

Այս անհամաչափությունները կարող են պայմանավորված լինել ինչպես կրթության հասանելիության անհավասարությամբ, այնպես էլ տնտեսական ակտիվության կենտրոնացման գործոններով: Այս պահի դրությամբ ՀՀ-ում գործում է 101 674 տնտեսվարող, որոնցից 53 649-ը ՝ մայրաքաղաքում: Ամենաքիչ տնտեսվարողների քանակը գրանցվել է Վայոց ձորում՝ 1758 տնտեսվարող: ՀՀ-ում տնտեսվարողների աշխարհագրական բաշխվածությունը վկայում է Երևանի տնտեսական գերակշռության մասին (ՀՀ ՎԿ, ՓՄՁ-ները ՀՀ-ում 2024):



Գծապատկեր 7. Տնտեսվարողների քանակն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի

Տնտեսական անհավասարությունն ընդգծող ցուցանիշներից է նաև միջին ամսական անվանական աշխատավարձը: ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձը վերջին 10 տարիների ընթացքում զգալիորեն աճել է 147 հազարից՝ 269 հազար ՀՀ դրամ, լուրջ աճ է գրանցվել 2020թ. -ից հետո՝42 տոկոսով, ինչը կարող է կախված լինել և՛ գնաճի ցուցանիշներից, և՛ տնտեսական վերականգնման և աշխատավարձերի բարձացման քաղաքականության հետ (ՀՀ ՎԿ, Ժամանակագրական շարքեր 2000-2024):



Գծապատկեր 8. Միջին ամսական անվանական աշխատավարձ

Առաջին հայացքից ուրախալի թվացող անվանական աշխատավարձի աճի այսպիսի ցուցանիշների տակ թաքնված է մայրաքաղաքի և մարզերի բնակիչների աշխատավարձի և եկամուտների զգալի անհավասարություն: 2024թ.-ի 3-րդ եռամսյակի տվյալների համաձայն՝ մայրաքաղաքում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմում է մոտ 320 հազար դրամ (ՀՀ ՎԿ, Ժամանակագրական շարքեր 2000-2024): Դրան ի հակառակ՝ մարզերում՝ հատկապես ոչ կենտրոնական հատվածներում, աշխատավարձը կազմում է 160-190 հազար դրամ, ինչն ակնհայտորեն ցածր է մայրաքաղաքի մակարդակից:



Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձը ըստ ՀՀ մարզերի 2024թ. 3րդ եռամսյակ

Համաձայն վիճակագրական տվյալների՝ անվանական աշխատավարձի ամենացածր մակարդակը Գեղարքունիքի և Շիրակի մարզերում են, համապատասխանաբար ՝ 145 և 152 հազար դրամ, որը մայրաքաղաքի և ՀՀ-ում անվանական աշխատավարձի մակարդակով երկրորդ տարածաշրջանի՝ Սյունիքի, անվանական աշխատավարձի կեսն է (ՀՀ Վիճակագրական կոմիտե, Աշխատանքային ռեսուրսներ 2022): Սյունիքում միջին ամսական անվանական աշխատավարձի այսպիսի մակարդակը բացատրվում է համայնքում գործող «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ -ի առկայությամբ, որը գլխավորում է 2024թ.-ի 4-րդ եռամսյակի 1000 խոշոր հարկատուների ցանկը (ՀՀ ՊԵԿ, «1000 խոշոր հարկատուներ», 2024 4-րդ եռամսյակ): Ըստ կազմակերպության հրապարակած տվյալների՝ կազմակերպությունում աշխատում են ավելի քան 4600 աշխատակիցներ, որոնց 80%-ը համայնքաբնակ է (ԶՊՄԿ 2024): Գեղարքունիքի և Շիրակի մարզերում աշխատավարձի ցածր մակարդակը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից կարելի է առանձնացնել ենթակառուցվածքային զարգացման խնդիրը:

Աշխատավարձի դինամիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս ընդգծել, որ այն կտրուկ տարբերվում է կանանց և տղամարդկանց շրջանում:



Գծապատկեր 10. Աշխատավարձն ըստ սեռի

Այսպես, եթե տղամարդկանց միջին ամսական անվանական աշխատավարձը 2023թ. -ին կազմել է 341 388 դրամ, ապա նույն ժամանակշրջանի համար, կանանց աշխատավարձը կազմել է 202 524 դրամ, որը համապատասխանում է տղամարդկանց աշխատավարձի մոտ 60%-ին (ՀՀ ՎԿ,Աշխատավարձն ըստ ցուցանիշների և տարիների 2023):Այս համատեքստում, շեշտվում է գենդերային անհավասարության խնդիրը, որն ավելի սուր է ՀՀ մարզերում:

Եզրակացություն

Մարզային անհամաչափ զարգացվածության խնդիրը բավականին սուր է ՀՀ-ի համար և արտահայտվում է տարբեր ձևերով:

- *Գործազրկության մակարդակ.* ՀՀ-ում, ըստ վիճակագրական տվյալների, 2023թ. -ին գործազրկության մակարդակը եղել է 12,6%, սակայն գեղատեսիլ բնությամբ օժտված Տավուշի մարզը ունի ՀՀ-ում գործազրկության ամենաբարձր՝ 23,3 % ցուցանիշ, որը անհամեմատելի է Արագածոտնի մարզի հետ, որտեղ գործազրկությունը 4% է: Վերլուծելով տնտեսության կառուցվածքը՝ կարելի է ենթադրել, որ գործազրկության բարձր մակարդակը կապված է խոշոր ձեռնարկությունների բացակայության հետ: Օրինակ՝ Տավուշի մարզում, որտեղ կան զբոսաշրջության զարգացման համար բոլոր նախապայմանները, չկան խոշոր տուրիստական ոլորտի ձեռնարկություններ, ինչի մասին վկայում է 1000 խոշոր հարկատուների ցուցակը (ՀՀ ՊԵԿ, 1000 խոշոր հարկատուներ, 2024): Ցուցակում տեղ գտած 3 կազմակերպություններից և ոչ մեկը զբոսաշրջության ոլորտի կազմակերպություն չէ: Արագածոտնի մարզը, որը տարածքի մեծությամբ և բնակչության քանակով նման է Տավուշի մարզին, ունի 9 խոշոր ձեռնարկություն: Կարելի է ենթադրել, որ մարզում զբաղվածության բարձր մակարդակը կախված է խոշոր ձեռնարկությունների առկայությունից:
- *Միջին ամսական անվանական աշխատավարձ.* Տարիների ընթացքում միջին ամսական անվանական աշխատավարձը բավականին աճ է գրանցել ՝ 10 տարվա ընթացքում՝ 146 հազարից 270 հազար դրամ: Մեդալի հակառակ կողմից պատկերը այդքան էլ լավատեսական չէ: Շիրակի և Գեղարքունիքի մարզերում միջին

աշխատավարձը երկու անգամ ցածր է մայրաքաղաքի և Սյունիքի մարզի աշխատավարձից:

- *Կրթական մակարդակ.* Աշխատանքային ռեսուրսների վերլուծությունը ցույց է տալիս մարզային՝ մասնավորապես գյուղական բնակավայրերում, բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող կադրերի պակաս: Այս միտման հիմնական պատճառներն են՝ կրթված մարզային բնակիչների ներքին միգրացիան դեպի մայրաքաղաք, բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների պակասը մարզերում, մարզային ցածր աշխատավարձը*:*
- *Տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացում.* Համաձայն կատարված ուսումնասիրության՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի 53%-ը ծավալում են իրենց գործունեությունը ք. Երևանում: Այս հիմնախնդրի պատճառով առաջանում են բոլոր վերոհիշյալ խնդիրները, մասնավորապես՝ մարզերում տնտեսվարողների սահմանափակ քանակի պատճառով առաջանում է աշխատատեղերի պակաս, որի պատճառով աճում է մարզային գործազրկության մակարդակը, նվազում է միջին ամսական անվանական աշխատավարձը, և նվազում է քաղաքացու կողմից որակյալ կրթություն ստանալու հնարավորությունը:

Առաջարկներ

Վերոթվարկված խնդիրների լուծման համար, առաջարկում ենք որդեգրել հստակ սոցիալ-տնտեսական քաղաքականություն, որը համակարգված կլինի կոնկրետ նախագծային լուծումներով, մասնավորապես՝

1. *Տնտեսվարողների մարզային գործունեության և ներդրումների խթանում.* ՀՀ-ում 1000 խոշոր հարկատուները ապահովում են ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների շուրջ 75% (Հետք 2024), սակայն խոշոր հարկատուներից միայն 41-ն է ծավալում (ՀՀ ՎԿ, *ՓՄՁ-ները ՀՀ-ում* 2023) իր գործունեությունը ՀՀ մարզերում: Այս տենդենցը արգելակում է մարզային ենթակառուցվածքների զարգացումը և նպաստում՝ տնտեսության կենտրոնացմանը: Խնդրի լուծման լավ տարբերակ կարող է լինել հարկային արտոնությունների փաթեթի մշակումը խոշոր տնտեսվարողների գործունեության այն հատվածի համար, որը մասամբ կամ ամբողջովին իրականացվում է ՀՀ մարզերում: Այս փաթեթը կարող է արդիական լինել նաև ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից ներդրումային գործունեության խթանման համար: Օրինակ՝ Չինաստանը 1980-ական թվականներին, օտարերկրյա ներդրումների խթանման համար, մշակեց արտոնությունների փաթեթ, որի շահառուներն էին հատուկ տնտեսական գոտիներում (ՀՏԳ) տնտեսվարող կազմակերպությունները: Այս փաթեթը իր մեջ ներառում էր՝

- Կորպորատիվ հարկերի ցածր դրույքաչափեր. Օտարերկրյա ընկերությունները, որոնք ներդրումներ էին կատարել առաջնահերթ ոլորտներում կամ արտահանման նպատակով արտադրություն էին ծավալել ՀՏԳ-ում, կարող էին օգտվել կորպորատիվ հարկի ցածր դրույքաչափերից: Օրինակ՝ կորպորատիվ հարկի ստանդարտ դրույքաչափը կարող էր կրճատվել սովորական 33%-ից մինչև 15%:
- Հարկային արտոնյալ ժամանակաշրջան. Ընկերությունները հաճախ ստանում էին «արձակուրդային շրջան», որի ընթացքում լիովին ազատված էին կորպորատիվ հարկերից, ապա աշխատում էին իջեցված դրույքաչափով:
- Հարկերից ազատում վերաներդրված շահույթի դեպքում. Հետագա ներդրումները խրախուսելու համար օտարերկրյա ներդրողները կարող էին հարկային արտոնություն ստանալ առաջնահերթ ծրագրերում վերաներդրված շահույթի կամ Չինաստանում այլ տեսակի գործառնությունների ընդլայնման համար:
- Ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) արտոնություններ. ՀՏԳ -ները հաճախ տրամադրում էին ԱԱՀ-ի արտոնություններ՝ արտահանվող ապրանքների

արտադրության համար նախատեսված ներմուծվող նյութերի ներկրման դեպքում (Zeng,pp 4-6):

2. *Բարձրագույն կրթության հասանելիության բարձրացումը մարզերում.* Բուհական կրթությունը առանձնակի կարևորություն ունի տնտեսական աճի համար, և հավասարաչափ զարգացման համար հարկավոր է այն հասանելի լինի հասարակության համար՝ անկախ բնակավայրից: Այս պահի դրությամբ ՀՀ-ում գործում են 53 պետական և ոչ պետական համալսարաններ, որոնցից միայն 42-ն են մայրաքաղաքում (ՀՀ ՎԿ, Սոցիալ-ժողովրդագրական հատված 2023): Բնականաբար, հնարավոր չէ ցանկացած բնակավայրում բացել համալսարան՝ պահպանելով բարձրագույն կրթական համակարգի ստանդարտները: Այդ իսկ պատճառով առաջարկում եմ համալսարանների կողմից ներդնել և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի օնլայն դասընթացներ՝ համապատասխան դիպլոմավորմամբ: Այս դեպքում գրեթե բոլոր բնակավայրերից դիմորդները կարող են ստանալ բարձրագույն կրթություն: Բնականաբար, այս ձևաչափը իր մեջ կարող է պարունակել խնդիրներ և մարտահրավերներ (ինտերնետի հասանելիություն, քննական և ստուգարքային հարցման մեթոդաբանության մշակում և այլն), սակայն այս առաջարկը կարող է որոշ չափով շտկել առկա կրթական անհավասարության խնդիրները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Իսրայելյան Սրբուհի. *«Սինգապուրի տնտեսական «հրաշքը»»*, https://www.hamakarg.am/?p=1255&utm_source=chatgpt.com: Մուտք՝ 21.12.2024:
2. ՀՀ ՊԵԿ. *«1000 խոշոր հարկատուներ»,* https://www.src.am/am/getMenusContents/120: Մուտք՝ 13.02.2025:
3. ՀՀ Վիճակագրական կոմիտե. *Աշխատանքային ռեսուրսներ*. 2022թ., https://armstat.am/file/article/lab_market_2023_1.pdf: Մուտք՝ 18.12.2024:
4. ---. *Աշխատանքային ռեսուրսներ. 2024թ.* https://armstat.am/file/article/armenia_2024_4.pdf: Մուտք՝ 22.12.2024:
5. ---. *Աշխատանքային ռեսուրսներ. 2023թ.* , https://armstat.am/file/article/lab_market_2023_1.pdf: Մուտք՝ 22.12.2024:
6. *Աշխատավարձն ըստ ցուցանիշների և տարիների*,2023թ. https://rb.gy/pt2ciw: Մուտք՝ 18.12.2024:
7. ---. *Աշխատանքի շուկայի ցուցանիշներ,* https://www.armstat.am/file/article/sv_09_24a_141.pdf: Մուտք՝ 22.12.2024:
8. ---. *Ժամանակագրական շարքեր*, Միջին ամսական անվանական աշխատավարձ, 2000-2024թթ. , https://armstat.am/am/?nid=12&id=08001: Մուտք՝ 18.12.2024:
9. ---.*ժամանակագրական շարքեր*, Գործազրկության մակարդակ 2008-2023 թթ, https://armstat.am/am/?nid=12&id=08010&submit=: Մուտք՝ 20.12.2024:
10. ---. Սոցիալ- Ժողովրդագրական հատված, https://armstat.am/file/article/sv_06_24a_510.pdf: Մուտք՝ 18.12.2024:
11. ---. *ՓՄՁ-ները ՀՀ-ում*, https://armstat.am/file/article/sme_bul_2023_am.pdf: Մուտք՝ 22.12.2024:
12. ԶՊՄԳ. *Կազմակերպության մասին,* https://www.zcmc.am/career/: Մուտք՝ 21.12.2024:
13. «Հետք» կենտրոն. 1000 խոշոր հարկատուներ 2024թ. . https://www.hetq.am/hy/article/168392: Մուտք 25.12.2024:
14. Սոյուզ-ինֆո կայք էջ. *Տնտեսական վերլուծություն,* https://soyuzinfo.am/hy/2023/08/20-3/?utm_source=chatgpt.com: Մուտք՝ 21.12.2024:

15. International Monetary Fund. *Unemployment rate in Thailand,* https://rb.gy/8oyslf. Accessed: 21.12.2024:

16. Statista, Thailand: Distribution of employment by economic sector from *2013 to 2023*, https://rb.gy/kqsbon. Accessed:21.12.2024.

17. Statista, Japan: Distribution of the workforce across economic sectors from 2012 to 2022, https://shorturl.at/PhRws. Accessed:21.12.2024

18. Statistical Committee of Azerbaijan. *Unemployment rate in Azerbaijan*. https://www.stat.gov.az/news/index.php?id=5761&lang=en. Accessed: 21.12.2024.

19. Statistical Committee of Georgia. *Unemployment rate in Georgia*. https://rb.gy/ctu7bw. Accessed: 21.12.2024.

20. World Bank Group Data. Unemployment rate in Singapore, *https://rb.gy/t6jtid*. Accessed: 21.12.2024

21. Zeng, D.Z. *Special Economic Zones: Lessons from the Global Experience*. London, 2018, pp.4-6.

WORKS CITED

1. Israyelyan S., *Singapuri tntesakan «hrashqy» [The Economic Miracle of Singapore]*, https://www.hamakarg.am/?p=1255&utm_source=chatgpt.com, Mutq 21.12.2024. (In Armenian)

2. HH PEK, *«1000 khoshor harkatuner»* [State Revenue Committee of the Republic of Armenia, "1000 Largest Taxpayers,"], https://www.src.am/am/getMenusContents/120. Mutq 13.02.2025, (In Armenian)

3. HH Vichakagrtakan Komite, *Ashkhatankayin resursner, 2022t.* [Statistical Committee of the Republic of Armenia. Labor Resources 2022] https://armstat.am/file/article/lab_market_2023_1.pdf. Mutq 18.12.2024, (In Armenian)

4. HH Vichakagrtakan Komite, *Ashkhatankayin resursner*, 2024t. [Statistical Committee of the Republic of Armenia. Labor Resources 2024] https://armstat.am/file/article/armenia_2024_4.pdf, Mutq 22.12.2024, (In Armenian)

5. HH Vichakagrtakan Komite, *Ashkhatankayin resursner*, 2023t. [Statistical Committee of the Republic of Armenia. Labor Resources 2023] https://armstat.am/file/article/lab_market_2023_1.pdf, Mutq 22.12.2024, (In Armenian)

6. HH Vichakagrtakan Komite, *Ashkhatavardzn yst cucanishneri yev tarineri* [Statistical Committee of the Republic of Armenia, Wages by Indicators and Years, https://shorturl.at/gY5Xy Mutq 18.12.2024,] (In Armenian)

7. HH Vichakagrtakan Komite, *PMD-ner@ HH-um*, [Statistical Committee of the Republic of Armenia, SMEs in Armenia] https://armstat.am/file/article/sme_bul_2023_am.pdf, Mutq 22.12.2024, (In Armenian)

8. HH Vichakagrtakan Komite, Sotsial-Zhoghovrdagrakan hatvats [Statistical Committee of the Republic of Armenia. Socio-emographic Sector], https://armstat.am/file/article/sv_06_24a_510.pdf, Mutq 18.12.2024, (In Armenian)

9. HH Vichakagrtakan Komite, *Zhamanakagrakan sharer*, Gortsazrkutyan makardak 2008-2023tt, [Statistical Committee of the Republic of Armenia. Chronological Series, Unemployment rate 2008-2023] https://armstat.am/am/?nid=12&id=08010&submit=. Mutq 20.12.2024, (In Armenian)

10. HH Vichakagrtakan Komite, *Zhamanakagrakan sharer*, Mijin amsakan anvanakan ashkhatavardz, 2000-2024tt [Statistical Committee of the Republic of Armenia. Chronological Series Average monthly nominal wage, 2000-2024] https://armstat.am/am/?nid=12&id=08001. Mutq 18.12.2024, (in Armenian)

11. «Hetk'» kentron, 1000 khoshor harkatuner, [1000 Large Taxpayers] https://www.hetq.am/hy/article/168392, Mutq 25. 12. 2024 (In Armenian)
12. Soyuz-info kayq e'j. Tntesakan verluc'ut'yun [Economic Analysis], https://soyuzinfo.am/hy/2023/08/20-3/?utm_source=chatgpt.com: Mutq 21.12.2024:
13. ZPMK Kayq Ej, Mutq 13.02.2025, https://www.zcmc.am/career/.
14. https://soyuzinfo.am/hy/2023/08/20-3/?utm_source=chatgpt.com, Mutq 21.12.2024. [Zangezur Copper Molybdenum Combine (ZCMC) website] (In Armenian)

LABOR MARKET STRUCTURE IN ARMENIA'S REGIONS: CAUSES AND PROSPECTS OF REGIONAL IMBALANCE

LUSINE GRIGORYAN
Armenian State University of Economics, Faculty of Economics,
Department of Economic Theory, Ph.D.Student,
Yerevan, the Republic of Armenia

Regional imbalance is one of Armenia's most pressing issues, which has intensified since independence. Over the past three decades, many regional factories have ceased operations, leading to increased poverty, labor migration, and the relocation of residents to Yerevan in search of better opportunities.

The goal of this study is to identify the structural causes of regional disparity and propose potential solutions aimed at increasing economic activity in the regions.

The main objectives of the research are:

1. To assess the structure of the labor market in Armenia's regions,
2. To analyze the territorial distribution of economic resources, business entities, and educational institutions,
3. To examine the experiences of other countries — particularly China, Singapore, and Thailand — in promoting balanced regional development.

The study employs comparative analysis and case study methods to align Armenia's challenges with international experiences.

The key findings highlight that the main reasons behind uneven regional development include the concentration of labor and educational opportunities in the capital, insufficient infrastructure in the regions, and the absence of localized economic policies. To address these issues, a comprehensive approach is proposed, including tax incentives for regional businesses, improved access to higher education through online bachelor's and master's programs, and regional infrastructure development. These measures aim to reduce the level of centralization in Yerevan and promote balanced regional growth, ensuring sustainable long-term economic development.

Keywords: *structure of labor market, unemployment, regional disparity, employment, average monthly nominal wage, labor resources, labor resources by educational level.*

СТРУКТУРА РЫНКА ТРУДА В РЕГИОНАХ АРМЕНИИ: ПРИЧИНЫ И ПЕРСПЕКТИВЫ РЕГИОНАЛЬНОЙ НЕСБАЛАНСИРОВАННОСТИ

ЛУСИНЕ ГРИГОРЯН
аспирант кафедры экономической теории
Армянского государственного экономического университета,
г. Ереван, Республика Армения

Региональная несбалансированность развития является одной из главных проблем Армении, особенно обострившейся после обретения независимости. За последние три десятилетия многие региональные предприятия прекратили свою работу, что привело к росту бедности, усилению трудовой миграции и перемещению населения в Ереван в поисках лучшей жизни.

Цель исследования - выявить структурные причины неравномерного развития регионов и предложить возможные решения, направленные на повышение экономической активности в них.

Основные задачи исследования:

1. оценить структуру рынка труда в регионах РА,
2. проанализировать территориальное распределение экономических ресурсов, хозяйствующих субъектов и образовательных учреждений,
3. изучить опыт других стран, в частности, Китая, Сингапура и Таиланда в сфере сбалансированного развития.

В ходе исследования применялись методы сравнительного анализа и тематическое исследование для сопоставления ситуации в Армении с международным опытом.

Основные выводы исследования подчеркивают, что ключевыми причинами неравномерного развития являются концентрация трудовых ресурсов и образовательных возможностей в столице, недостаточное развитие инфраструктуры в регионах и отсутствие локальной экономической политики. В качестве решений предлагается комплексный подход, включающий предоставление налоговых льгот в регионах, повышение доступности высшего образования посредством онлайн-программ бакалавриата и магистратуры, а также развитие региональной инфраструктуры. Эти меры могут способствовать снижению уровня централизации в Ереване и стимулировать сбалансированное развитие регионов, обеспечивая долгосрочный экономический рост.

Ключевые слова: *структура рынка труда, безработица, региональная несбалансированность, занятость, средняя среднемесячная номинальная заработная плата, трудовые ресурсы, трудовые ресурсы по уровню образования.*